




«ԹՈՂ ՏՈՒԻՔ ՄԱՆՐ ՏՂՈՅԸ ՈՐ ԻՆԵՒ ԳԱՆ.» ԳՈՒԿ. ԺԸ. 16.

ՀԱՏՈՐ ԼԴ.

ԿՈՍՏԱՆԴՆՈՒՊՈԼԻՍ, ՄԱՐՏ 1, 1905

ԹԻՒ 3

ՔԵՆՔՐՊՐԻԻ
 ՄԱՅՐ ԵԿԵՂԵՑԻՆ
 Երկու տարիէ
 աւելի առաջ այս
 մայր եկեղեցին
 մեծ գրան պատ-
 կերը գրինք Տաշ-
 Թեքէին մէջ.
 բայց մեր հիմա
 հրատարակած այս
 պատկերը աւելի
 լաւ գաղափար մը
 կու տայ այս հո-
 յակապ շէնքին
 վրայ, որ երկու
 անգամ ըստ մա-
 տին հրդեհով կոր-
 ծանեցնէն ետքը
 նորէն շինուեցաւ
 տակէ 700 տարի
 առաջ. և հիմակ-
 ուան շէնքին մէկ
 մասը աւելի կա-
 նուխ շինուած է:
 Մէջտեղի բարձր
 աշտարակը լին-
 ցած չէր մինչև իբր 400 տարի առաջ.
 Ետևի շէնքերը եկեղեցականներու
 բնակութեան համար են: Արքեպիս-
 կոպոսը իրեն բնակարանն ունի Լոն-
 տոն, Լամպէթ պալատին մէջ: Տր.
 Տէյվիտսըն, այժմու արքեպիսկոպո-
 սը, այդ անունը կրողներուն 96երորդ
 անձն է:



ՏՈՒԻՆ ԻՆՉ ՈՐ ՈՒՆԵԻՆ
 Ծննդեան Տճնի հետևեալ սիրուն
 պատմութիւնը կը գտնուի լրագրի մը
 մէջ.
 Երեք երիտասարդ ուսանողներ
 1837ին փարիզի մէջ պտոյտի ելած
 էին, և պատահեցան փողոցի ձերուկ
 վհատեալ և աղքատիկ նուագածուի
 մը: Իրենց ուշադրութիւնը գրաւեցին

անոր խեղճուկ երևոյթը և շութակը,
 և հարցուցին թէ ի՞նչ կրնային ընել
 իրեն համար. Երբունին վայրկեան մը
 լուռ կեցաւ, յետոյ իր գլխարկը ա-
 նոնց երկնցուց: «Տուէք ինձի պզտիկ
 բան մը: Ես իմ արուեստովս չեմ
 կրնար բան մը շահիլ: Մասերս կարճ-
 րացած են և աղջիկս կը մեռնի չքա-
 տրութենէ:» Երիտասարդները երեքն
 ալ գրպանին խոթեցին իրենց ձեռ-
 քերը: Անոնք աղքատիկ ուսանողներ
 էին, և արդիւնքն եղաւ տասնըվեց
 սու (չորս դահեկան) միայն: «Ասիկա
 չեղաւ,» ըսաւ անոնցմէ մին, «պէտք
 է որ աւելի բան ընենք մեր արուես-
 տակցին: Դուն, Ատոլֆ, ձեռք առ
 շութակը և նուագէ կուսթափի եր-
 գին հետ, ես ալ պիտի պտըտիմ

գլխարկը ձեռքս:» Գլխարկները ե-
 ռեւերնուն վրայ քայեցին և վեր
 դարձուցին վերարկուններնուն օձիք-
 ները չճանչցուելու համար: Ատոլֆ
 շութակը առաւ մարդուն դողդաղող
 ձեռքերէն: Կուսթափ շտկեց իր ու-
 սերը: Եւ վայրկեան մը ետքը «վե-
 նետիկի Բարեկենդանը» կոչուած ե-
 ղանակին առաջին խաղերը լեցուցին
 գիշերային օդը: Այսպիսի ճարտար
 երաժշտութիւն սովորաբար չլսուիր
 փողոցի նուագածուներուն գործիք-
 ներէն: Ապարանքներուն պատուհան-
 ները բացուեցան, և գլուխներ դուրս
 ցցուեցան: Փողոցին մէջ ալ պտոյտ
 ընողները կանգ առին, և ուրիշներ
 որոնք արդէն վար իջած էին անկէ,
 նորէն ետ դարձուցին իրենց քայլերը:

Շուտով բաւական բազմութիւն մը հաւաքուեցաւ հոն :

Երիտասարդները կը նուագէին և կ'երգէին այնպէս ինչպէս թերևս չըրին անկէ ետքը իրենց սպազայ կեանքին մէջ: Ունկնդիրներուն մէջ գտնուած ամէնէն բծախնդիրներն անգամ սքանչացան: Կեանքը ետ եկաւ ծերուկին մէջ: Չեռք առաւ իր ցուպը և սկսաւ անով չափ տալ նուագածուններուն ճարտար առաջնորդի մը պէս: Ոտքի վրայ ան շարժ մնաց մինչ անոնք կը նուագէին և կ'երգէին, երեսը զուարթացած և աչքերը փայլելուն: «Եղանակ մ'ալ», չնչնեց ստակ հաւաքողը: «Ատողֆ, դուրս հանէ քու բամբերդը և երանակներդ: Ես քեզի պիտի օգնեմ: Երգերը պիտի աւարտենք 'Ուիլբերմ' թէլ'ով: Եւ միտք բեր որ պիտի երգենք ի պատիւ Երաժշտական Դպրոցին և այս մեր արուեստակիցին համար:»

Մտակը անձրևի պէս թափեցաւ գլխարկին մէջ երբ աւարտեցաւ երաժշտութիւնը: Այնուհետև երիտասարդները մարդուն ետ դարձուցին գըլխարկը և անոր պարունակած ստակները, և նուագարանը ծրարեցին անոր հին թաչկինակին մէջ:

«Եւ մտածե՛լ թէ դուք չէք գիտեր անգամ անունս», գոչեց շփոթած եւ խառնագէտ ծերուկը: «Ոհ, ես կրնայի խաբեբայ մը ըլլալ, բայց չեմ: Տասը տարի տնօրէն եղայ Սթրասպուրկի նուագախումբին: Իմ երկրէս Ալզասէ մեկնելէս ի վեր դժբաղդութիւն եկաւ վրաս: Այս ստակով աղջիկս և ես կրնանք ծննդավայրս վերադառնալ, ուր կը յուսամ թէ անիկա նորէն պիտի ստանայ իր առողջութիւնը, ես ալ պիտի գտնեմ ուսուցչի գործ մը:»


Հակառակ անձանթ մնալու ջանքերուն, երիտասարդները ճանչցուեցան այս պատմութիւնը պատմողէն: Անոնք սա համբաւաւոր արուեստագէտներն եղան յետոյ: Կուսով Բոսթէ, մեծ թէնորը, Ատողֆ Հէրման, մեծ ջութակահարը, և Շառլ Կունս, մեծ երգահանը:



ԼՀԱՍՍ

1904ի շահեկան դէպքերէն մին եղաւ Հնդկաստանէ Անգղիացի արշաւախումբի մը Լհասա այցելութիւնը: Անոնց յառաջացումը արգելուեցաւ, և քանի մը ճակատամարտներ մղելէ ետքը անոնք յաջողեցան իրենց նպատակին հասնիլ: Առաջ այդ քաղաքը այնքան նախանձաւորութեամբ չէր պահպանուեր, բայց 1846էն ի վեր Եւրոպացի մը չյաջողեցաւ հոն հասնիլ, թէև ջանացին Ռուս, Գաղղիացի, Անգղիացի, Ամերիկացի և ուրիշ ճանապարհորդներ: Լհասա քաղաքը ծովուն մակերեսէն զրեթէ 12,000 ոտք վեր է, կամ Պրուսայի Ողիմպոս լե-

մութ և փոթորկալի գիշեր մը յանդուգն գող մը մտաւ ամբարանոց և գողցաւ գեղեցիկ Արտեմիսը: Գողը գտնելու ամէն ջանք պարապ ելաւ, թէև երկար ժամանակ շարունակուեցաւ փնտաւորը: Վերջապէս ընտանիքը ցաւով թողուց ամէն յոյս: Ուրիշ բայց ստորին ձի մը գնուեցաւ, բայց տան տղաքը բնապէս չուզեցին որ ասիկա իրենց այն սիրական կենդանիին տեղը գրաւէ Խոտոն մէջ, վասն զի ինչ որ անոր կը վերաբերէր, կ'ուզէին նուիրական պահել: Գրեթէ քսան տարիներ անցած էին, կղերականին մաղբըրը ճերմկացած էին տարիքը առնելէն, և անոր զաւակ-



ները երիտասարդներու կիներ եղած էին: Այնպէս պատահեցաւ որ անան մը մէջ անիկա գործի համար նահանգին հեռաւոր մէկ կողմը գնաց առանձին կառքով զոր ինք կը կառավարէր: Ճամբորդութեան երրորդ առաւօտը երբ կամաց կամաց կ'երթար ուրուն ճամբէ մը, ահա իր ուշադրութիւնը տեղին գեղեցիկ տեսարաններէն դարձաւ ճամբուն մէկ կողմը արօտի մը մէջ գըտնուած ծեր ձիու մը

ուան դագաթէն 3,000 ոտք բարձր, Անիկա բնակավայրն է Մեծ Լամային, որ Պուտտայականութեան ամէնէն բարձր կրօնականն է: Լամային պալատը բլուրի մը գագաթին վրայ է, և քաղաքին գլխաւոր շէնքը: Լհասայի մօտ շատ մենաստաններ կան հարիւրաւոր Պուտտայական ճգնաւորներով: Թէպէտ քաղաքը անմասշտի է Եւրոպացիներու, դուրսէն շատ Պուտտայական ուխտաւորներ կ'ընդունի ամէն տարի, և այս պատկերը աննոցմէ մեկուն քաջած լուսանկարէն առնուած է:

ԿՈՐՍՈՒԱԾ ՁԻՆ

Ամերիկեան Նիւ Եորք նահանգին Օպըրն քաղաքին մէջ սակէ իբր վաթսուն տարի առաջ կը բնակէր կղերական մը: Ունէր շատ գեղեցիկ, սրբութաց, սիրուն շառագոյն զամբիլ մը (գըսրագ) որ կը կրէր Արտեմիս դասական անունը: Այս ձին քաղաքին զարմանալիքն էր և կղերականին ընտանիքին պարծանքը: Բայց, աւաղ,

տարօրինակ ընթացքին: Այնպէս կը թուէր թէ կենդանին կը ջանար կղերականին ուշադրութիւնը իրեն գրաւել: Ետևի սրունքներուն վրայ կը կանգնէր, կը վրնջէր, և ցանկապատին կը զարնէր իր առջևի ոտքերով: Եւ բոլոր ժամանակը անոր կամաց կամաց գացող կառքին հետ յառաջ կը շարժէր: Կղերականը քիչ մը զարմանալով կենդանիին այս տարօրինակ ընթացքին վրայ, կառքը քչեց դէպ ի արօտին ծայրը, և անկէ դէպ ի վար դարձուց ճամբէ մը որ հակառակ կողմ մը կ'երթար: Երբ այսպէս ըրաւ, սպչեցաւ մարդկային տառապանքի այնպիսի աղաղակ մը լսելով արօտին մէջ գտնուող այն խեղճ կենդանիէն, որ խիոյն կեցուց կառքը և ետ նայեցաւ: Ձին ցանկապատին անկիւնը կայներ և իր վիզը յուսահատօրէն երկնցուցեր էր ու կը դողար բոլոր մարմնովը, իր աչքերը կղերականին վրայ անկեր էր սաստիկ անձկութեան նայուածքով, որ զարմանալի կերպով յուզեց անոր փափուկ սիրտը: Հիմա կղերականը

դիտեց որ կենդանիին գլուխը և երեսը իր կորսուած Արտեմիսին կը նմանէին : Ուստի այս պատճառաւ յանկարծական բնազդով մը արագութեամբ ետ դարձուց կառքը դէպ ի արօտին մօտ գտնուող ագարակի տունը , ուր տեսաւ որ ագարակապանը կէսօրուան ճաշէն կ'ելլէր : « Բարեկամ ,» ըսաւ կղերականը , « այդ արտին մէջի ձին ձե՛րն է : » « Այո , այդ իմ զամբիկս է : Զանիկա իբր քսան տարի առաջ առած եմ : » « Բասն տարի » կրնամ հարցնել ձեզի թէ ուր կէ՞ առիք զայն , բարեկամ : » « Փերեզակէ մը , որ կինս խարեց չըջազեատցուի մը գնումին մէջ , բայց զիս չխաբեց այդ ձիին առևտուրին մէջ : » « Ոհ , իմ Արտեմիսս է այն , տարակոյս չունիմ երբեք , » դուք կղերականը և զրգուռած դէպ ի արօտը ուղղուեցաւ : Ետեւէն կ'երթար ապշած ագարակապանը , որ արտը մտաւ : Եւ այն վայրկեանին որ ծերուկ զամբիկը տեսաւ զանիկա , վայրագութեամբ յառաջ վազեց դէպ ան , ցնձուկեանէն վրընջելով : Թէև կենդանին ծերացած և գոյնը աւրուած էր , և մազերը թափօթիած էին և ինք կաղացած , բայց կղերականը տակաւին անվրէպ նշմարեց անոր կորսուած նախկին գեղեցկութիւնը : Ոհ , տեսնելու բան էր Արտեմիսի ցնձութիւնը : Փափկութեամբ կը լցէր իր տէրոջ ձեռքերն ու երեսը , սիրալիբ կերպով մը անոր ուսին վրայ հանգչեցուց իր գլուխը և ի վերջոյ իր պըրոզ հին կերպերովը անոր գլխարկին եղերքը փափուկ մը իր ակուններուն մէջ առաւ , և զանիկա անոր գլխէն բարձրացուց և նորէն տեղը դրաւ գլխարկին ետևի կողմը առջևը :

« Իս ատոր այսպէս ընելը երբեք տեսած չէի , » աղաղակեց ագարակապանը :

Անիկա խաղ մըն էր զոր կղերականը սորվեցուցած էր , և զոր միտքը պահած էր կենդանին անոնց քսան տարիէ ի վեր բաժնուելէն հետէ , և ահա նորէն ի գործ կը դնէր զանիկա իր սիրելի տէրոջ համար : Երկրագործը հաւանեցաւ բաժնուիլ Արտեմիսէ պզտիկ գունմարի մը փոխարէն և կենդանին նորէն նախկին տունն ընդունուեցաւ ընդհանուր ուրախութիւններու մէջ : Հոն ապրեցաւ , սիրով խնամ տարուեցաւ անոր , տարիներով , և հոն մեռաւ առանց ցաւ քաշելու , և իր վերջին շունչը փչեց , մինչ ի զուր կը ջանար իր տէրոջ ձեռքը լղել :



ՄԱՌՈՒՐ ԿԱՌ


Քաղաքի մը առողջութեան համար ոչ մէկ բան աւելի կարևոր է քան անոր մաքուր կաթ ունենալը : Կաթը գլխաւոր , եթէ ոչ միակ , ուտեստն է շատ մանկիկներու , որոնց մայրերը անկարող են ծծցնել , և կը մտնէ մանուկներու շատ կերակուրներու մէջ երբ անոնք բաւական կը մեծնան , կաթը երբ կը կթուի առողջ կովէ , զերծ է միքրոպներէ , բայց կ'ըլլայ միջոց մը , որուն մէջ միքրոպները աւրագ կը բազմանան , եթէ կաթին ջերմութեան աստիճանը նպաստաւոր ըլլայ : Այն ատեն մէկ միքրոպը 10,000 կ'ըլլայ վեց ժամու մէջ , և 10,000,000 ինը ժամու մէջ : Այս միքրոպներէն ոմանք անվրաս են . բայց ա-

կը արուին թէ մաքուր է կաթը : Անոնք որ կը կտորեն օրէնքը և տակաւին կը ծախեն անմաքուր կամ խարդախուած կաթ , վկայագիր չեն կրնար ընդունիլ , և կը հասկնան թէ անհաւատարիմ կաթնավաճառը չյաջողի : Այսպիսի կաթնավաճառ մը տեսուչներէն թուղթ մը կ'ընդունի , որուն մէջ կը գրուի , « Մենք փորձեցինք քննեցինք ձեր կաթը և զանիկա գտանք միքրոպներով լեցուն : Ըսել է թէ ձեր կովերը , կամ ամբարանոցները կամ կաթի ամանները մաքուր չեն , կամ դուք սառ չէք գործածեր ձեր կաթը պաղ պահելու համար : Եթէ չտակէք ծուռը , ձեր կաթը քաղաք պիտի չմտցնենք : » Այս պատկերը կը ցուցնէ թէ կովը ինչպէս կը խողանակուի և պոչը կը լուացուի կթելու սկսուելէ առաջ :



ԶԱՐ ԸԼԼԱԼՈՒ ԴԵՄ ԴԱՐՄԱՆ ՄԸ


« Ոհ , շատ չար է . ի՞նչ պիտի ընեմ ես այս տղան , » ըսաւ վրդովուած մայր մը : « Անոր գործել տուր , » պատասխանեց կնոջ խոհեմ մէկ բարեկամը : Լաւ խրատ : « Մատանան ծոյլ ձեռքերու համար ընելիք չարութիւն կը գտնէ , » խօսքը այնպէս ճշմարիտ է այսօր , ինչպէս էր այն օրերուն : Կրնա՞նք մարդիկ կրնային տեսնել կամ կը կարծէին թէ կրնային տեսնել իրենց ուսերուն վրայէն նայող Սատանային եղջերաւոր գլուխը : Հիմա կը հաւատուի թէ կայ բանտերու վիճակագրութիւններէ առնուած գոհացուցիչ ապացոյց թէ գործունեայ ձեռքեր տղաքը կ'արգելեն ոճիւր գործելու սկսել : Ամերիկեան թերթի մը մէջ թղթակից մը կը հաստատէ թէ ձեռական աշխատութիւնը այնպէս լաւ արգելիչ է ոճիւրներու , ինչպէս պատուաստը ծաղկախտին : Կըսուի թէ զգաստարանի մը վերատեսչին հարցուեցաւ անգամ մը , « Զեր խնամքին ներքեւ գտնուած բանտարկեալներուն հարիւրին քանի՞ն ձեռական արուեստի կրթութիւն ստացած է բաց ի քիչ մը երկրագործութեան ծանօթութենէ : » « Հարիւրին մէկ չկայ , » պատասխանեց վերատեսուչը : « Բանտին մէջ արհեստաւոր ունի՞ք : » « Միայն մէկ . այսինքն մէկ մարդ , որ կ'ընէ թէ տուն ներկել գիտէ : » « Կոչկակարներ ունի՞ք : » հարցուց այցելուն : « Երբեք ունեցած չենք : » « Գերձակներ ունի՞ք : » « Երբեք գերձակ



նոնք որ ախտերու սերմեր են , կը բազմապատուին հաւասար արագութեամբ : Հիւժախտը , կարմրախտը , կեղծմաշկը և ժանտատենդը այն հիւանդութիւններէն են , որոնք կաթի միջոցաւ կը հաղորդուին : Քանի մը տարի առաջ Ամերիկեան հարաւային քաղաքի մը մէջ պատահած ժանտատենդի համաճարակի մը պատճառները քննուելով հասկցուեցաւ որ 376 դէպքեր յառաջ եկած էին անոր համար որ կաթնավաճառ մը իր կաթի ամանները լուացած էր ապականեալ ջուրի մէջ : Ժողովուրդը այսպիսի վտանգէ պաշտպանելու համար Ամերիկեան և Եւրոպական շատ քաղաքներ շատ խիստ օրէնքներ դրած են : Օրինակի համար , Նիւ Եորքի մէջ կաթի վրայ հսկող պաշտօնեաներ կ'երթան գեղերը , ուրկէ կաթը կու գայ , Կը նային կը քննեն ախտները ուր կովերը կը պահուին , անոնց կերը , կթելու մթնոտը և ամանները որոնցմով կաթը կը ղրկուի քաղաք , կաթը կը փորձուի կը քննուի առաւօտեան կանուխ կառախուսմամբ հասնելէն ետքը , և եթէ փորձին կը դիմանայ , վկայաթուղթեր

ունեցած չենք:” “Տպագրիչներ:”
 “Երբեք տպագրիչ ունեցած չենք:”
 “Հիւաներ:” “Բանտին մէջ երբեք
 ունեցած չենք մէկը որ կարող ըլլայ
 ուղիղ գիծ մը գծել:”

Եթէ ասոնք իրողութիւններ են,
 դաստիարակութեան այն ճիւղը որ
 ձեռքերը կը կրթէ, իրեն արժանի
 արդիւնքը պիտի ցուցնէ: Մինչև ան-
 դամ եթէ հոս նկարուած պատկերը
 ուրիշ զգաստարաններու չյարմարի
 ալ, և սակայն ճշմարիտ է թէ մեր
 սոցալ շատ չարութիւն պիտի չսորվին
 երբ արժանաւոր գործի մը պարա-
 պին: Անոնք պէտք է որ գործունեայ
 պահուին: Ըսել չենք ուզեր թէ սաս-
 տիկ աշխատութեան գերի ըլլալու են
 անոնք, ոչ ալ թէ զրկուելու են խա-
 ղալու պատեհութիւններէ: Անոնք
 խաղալու պէտք ունին: հարկ է որ
 խաղան: Բայց այն շատ մը ժամերուն
 համար, մանաւանդ ամառուան ար-
 ձակուրդներուն, երբ սոցալ չեն գի-
 տեր ճիշդ թէ ի՞նչ ընելու են, և
 պատրաստ են երթալ գրեթէ ունե-
 տեղ բան մը գտնելու համար որ
 զբաւէ իրենց ժամանակը և ուշադ-
 րութիւնը, ահա այդ բանը պէտք է
 հայթայթել, այնպիսի բան մը՝ որ հե-
 տաբերական և օգտակար ըլլայ
 բարոյապէս մաքուր և բարձրացուցիչ
 միջնորդարի մը մէջ:



ԽԱՂԱՂՈՒԹԵԱՆ ԻՇԽԱՆԸ

Անտեան լեռներուն գագաթներէն
 մէկուն վրայ, ծովուն մակերեսէն
 տասնըչորս հազար ոտք վեր, և այն
 գծին վրայ, որ կ'որոշէ Արժանթինի և
 Բիլիի հանրապետութիւններուն մէջ-
 տեղի սահմանը, կանգնուած է աշ-
 խարհի ամէնէն զարմանալի յիշատա-
 կարաններէն մէկը:

Այդ երկու հանրապետութիւննե-
 րուն բնակիչները տարիներով կռուած
 են այս սահմանագլխին վրայ: Երբեմն
 անոնց վէճերը մինչև պատերազմի և
 արիւնհեղութիւններու գագաթ են:
 Հիմա իրարու հետ խաղաղութիւն ունին
 յիշեալ երկու ազգերը: Երկուքն ալ կը
 զարգանան հարստութեամբ և ոյժով,
 և Հարաւային Ամերիկայի բոլոր միւս
 երկիրներէն գերազանց են: Այս Ապա-
 նիական Ամերիկացիները տաք սիրտեր
 և վաւուրուն երեակայութիւններ ու-
 նին: Երբ դաշնագրութիւն մը կնքեն,
 գոհ չեն ըլլար անոր մագաղաթը կա-
 պելով, կնքամամով կնքելով և զանի-
 կա կառավարական գանձարանի կա-
 մարներուն մէջ փակելով: Այս կերպը
 բաւական կրնայ համարուիլ Հիւսի-


սային Ամերիկացոց համար, բայց ա-
 նոնց շատ տափակ և ապուշ կերպ մը
 կ'երևնայ: Որպէս ղի բոլոր աշխարհ
 գիտնայ թէ իրենք խաղաղութեան
 մէջ են, Գրիստոսի քսանըվեց ոտք
 բարձր մէկ վիթխարի արձանը շինած
 և կանգնած են կրանիթ կիսագունդի
 մը վրայ որ աշխարհը կը նշանակէ:
 Արձանը կը կանգնի Անտեան լեռներուն
 գագաթին վրայ Խաղաղական Ովկիա-
 նոսի մակերեսէն երեք մլոն վեր, և
 պատուանդանին վրայ քանդակուած
 է Սպաներէն արձանագրութիւն մը
 որ սապէս կը թարգմանուի:

“Այս լեռները պիտի խորտակուին
 փոշիանան, բայց Արժանթինի և Բիլիի
 ժողովուրդները պիտի չխզեն խաղա-
 ղութիւնը, զոր երգումով պահել ուխ-
 տած են Գրիստոս փրկչին ոտքը:”




ԼՍԱՍ ՊԱՏՄՈՒԹԻՒՆՍ

Եթէ քու մէկ ծանօթիդ վրայով
 անհաճոյ բան մը լսես, թերևս պիտի
 չուզես զանիկա քու ներսդ պահել,
 մինչև անգամ եթէ երբեք վստահ
 չըլլաս ալ անոր ճշմարիտ ըլլալուն:
 Հաւանորէն զանիկա ուրիշներու պիտի
 պատմես, մտածելով թէ դուն ամէն
 պատասխանատուութենէ կ'ազատուիս
 երբ ըսես թէ այսպէս լսեցիր, քեզի
 այսպէս ըսուեցաւ, և թէ անձնապէս
 բան մը չես գիտեր խնդրին վրայ:
 Երբեք չէ՛ս գիտած թէ ի՞նչպէս շու-
 տով դուրս կը ձգուին պատմութենէն
 այս բոլոր փոքրիկ պարագաները:
 Ամէն «թերևս», «կարելի է», և նման
 բառերը դուրս կը ձգուին երկրորդ
 անձէ մը պատմուելու ժամանակ:
 «Կարծեմ»ը շուտով կ'ըլլայ «տեսայ»,
 և մէկուն անորոշ կարծիքը կ'ընդուն-
 ուի իրը անոր դրական խօսքը: Քա-
 նի որ ճշմարիտ է այս, չես կրնար
 պատասխանատուութենէ զերծ մնալ
 բերով թէ այսինչ լուր լսեցիր, բայց
 վստահ չես անոր ճշմարիտ ըլլալուն:
 Չանիկա կրկնելուն կամ կրկին պատ-
 մելուն հետեանքը հաւանորէն այնչափ
 գէշ է որչափ եթէ պատուոյդ վրայ
 պնդես թէ անիկա կէտ առ կէտ
 ստոյգ է:
 Երբ կը լսես տարակուսելի պատ-
 մութիւն մը որ մէկուն պատուոյն կը
 դպչի, չըթունքներդ իրար բեր, և
 որոշէ թէ անոր ոչ մէկ բառը անոնց
 մէջէն պիտի անցնի: Եթէ ճշմարիտ է
 ան, շուտով պիտի հաստատուի: Եթէ
 սուտ կամ սխալ է, գոհունակութիւն
 կը դգաս որ չես փորձուած եղբոր մը
 կամ քրոջ մը վրաս տալ քու ազդե-
 ցութեանդ ծանրութիւնը տարով սու-
 տի մը:



ԳՊՈՌՑԻ ԱՄԵՆԵՆ ԲԱՐՁՐ ԾԵՆՔԸ


Նիւ Եորք քաղաքին մէջ հիմա կը
 կառուցուի աշխարհիս դպրոցի ամէնէն
 բարձր շէնքերէն մէկը: Տասը յարկ
 պիտի ունենայ վրայէ վրայ, և բաւա-
 կան պիտի ըլլայ 8,000 աշակերտներու
 համար: Ամէն մէկ յարկի մէջ դասա-
 րանի տասը սրահ պիտի գտնուի,
 իւրաքանչիւր սրահի մէջ գէթ յիսուն
 աշակերտի բաւող կարասիներով: Ու-
 սանողները զանազան յարկերը պիտի
 ելլեն չորս խոյր վերամբարձներու
 միջոցաւ, և գրեթէ ամէն մէկ պա-
 տուհանի քով հողհոհէ փախչելու
 կազմածներ դրուելով շէնքը ապահով
 պիտի ընեն այդ կողմանէ:



ՅՈՒՆՈՒԱՐԻ ՀԱՆՆԵՆՈՒԿԻՒՆ ՊԱՏԱՍԻԱՆԸ

Մ	Մ
Ա	Գ
Բ	Ն
Ո	Ն
Լ	Մ
Մ	Ս
Ս	Ս
Ո	Շ
Ն	Ք

Լուծեցին, Ուրբեմն: — Երուսաղէմ: Յ. Յու-
 ռուսէն: Արտ: — Վարդան Վարդերեսեան:
 Մարտի: — Միհրան Յ. Կարապետեան: Սու-
 ռ: — Նեփթալիմ: Յ. Թորոսեան: Խոբեբ: —
 Գարեգին Եսփերեան, Մարկոս Խաչատուրեան:
 Տէրգիտ: — Խաչատուր Յ. Անտոնեան, Նշան
 Պետրոսեան, Կարապետ Յովհաննէսեան, Կարա-
 պետ Աղաճանեան, Կարապետ Էրմուշեան, Մա-
 նուէ Տոնապետեան: Երտէս: — Արշակ Ն. Գաղ-
 պէնեան:



ՀԱՆՆԵՆՈՒԿ ՍՈՒՐԸ ԳԻՐԲԷՆ

0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0
0	0	0	0	0

1. Այդ մը որ իրը գերեզման գործածուեցաւ:
2. Խոտ մը որ օճառի յատկութիւն ունի:
3. Մաս-
 յին գործողութիւն:
4. Չարի վրայ ճանապարհորդ
 (առաջին գիրը զեղուած):
5. Քաղաք, ուր Պե-
 դոս հանդիպեցաւ Եփեսոսի ճամբուն վրայ:
6.
 Մեծ երաժիշտ մը:
7. Կերպարի աշխու նիւթ մը:
8. Չատուած մը:
9. Անդամների նշանակող բառ
 մը (արէն ձախ):
10. Գաւթի քաղաքին մէկ մասը:
11. Դարուհետի որդիներէն մին:
12. Նաթա-
 նայի ընտանիքը:
13. Բարի մարդու մը շար
 որդին:

Չրոններուն տեղը գրաւող գիրերը վերէն սկսե-
 ւով կը կարգապահին առուը պատշաճ շնորհաւո-
 րութիւն մը:

Ա. Գարսահիտար ԳՐԻԳՈՐ Գ. ԶԼԵԱՆ

Տարեկան բաժանորդագին 6 դաս. արծաթ,
 կանիփ, ամէն տեղւոյ համար:

Ամերիկայի Միտիոնայաց Ընկերութեան կողմէն
 Արտօնատէր ձ. Բ. ԿԻՒՆ
 Տնօրէն—Խմբագիր Հ. Ս. ՊԱՐՆԸՄ

ԿՈՏՏԱՆԴՆՈՒԳՈՂԻԾ
 Ի ՏԳՈՐԱՆԻ Ա. ՅԱՅՈՐ ԳՅՈՒՅՆ
 Ֆինանսերը Եօգուշու: Ամերիկան խան